

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



203, Մեպտեմբեր 2015 թ. No 203, September 2015 شماره ۲۰۳ مهر ماه ۱۳۹۴

Այս համարում

Հայերեն բաժին

1- Հայաստան.....	1
2- Արևմտյան Հայաստան.....	7
3- Միյուտք.....	10
4- Միջազգային.....	11
5- Հասարակական.....	12
6- Խոհեր.....	17
7- Գծանկարչություն.....	18
8- Առածանի.....	18

Պարսկերեն բաժին

1- Հայ գրականություն.....	1-2
---------------------------	-----

Ճապիկի առաջին էջում՝ << 24
Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրերը
 Համար 203, Սեպտեմբեր 2015 թ.
 No. 203, September 2015
 شماره ۲۰۳ مهر ماه ۱۳۹۴

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան
 Թամ Ղարախանյան, Մաթենիկ Ավետիսյան
 Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
 Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատվածաճառ - 5000 ռիալ
Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ
Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
 Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

Հայաստանի Հանրապետությունը 24 տարեկան է



Սեպտեմբերի 21-ին, ողջ աշխարհի հայությունը նշում է Հայաստանի Հանրապետության Անկախության օրը:

Հայաստանի Անկախության հռչակագիրն ընդունվել է 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն Խորհրդի նիստում:

ԽՍՀՄ օրենսդրությանը լիովին համապատասխան 1991թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ տարածքում անցկացվեց ԽՍՀՄ-ից դուրս գալու հարցով հանրաքվե, որին մասնակցելու իրավունք ունեցող 2,056,758 քաղաքացիներից 2,042,627-ը (94.39%) Հայաստանի անկախությանը «այո» ասացին: Դեռ էր ընդամենը 10 հազար մարդ կամ 0,46 տոկոսը:

1990 թ. Անկախության հռչակագրից հետո ՀՀ Գերագույն խորհրդի որոշումով 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի տարածքում անցկացվեց հանրաքվե: Հայաստանի Հանրապետության բնակչությունը պատասխանեց հետևյալ հարցին. «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ, ժողովրդավարական հանրապետություն՝ ԽՍՀՄ կազմից դուրս»:

Հաջորդ օրը հրապարակվեց ՀՀ անդրանիկ անկախ օրենսդիր մարմնի դիմումը հայ ժողովրդին. «Ազատության ճանապարհին մեզ սպասում են նոր փորձություններ, դա ամենօրյա քննություն է լինելու մեզ համար: Պահպանենք մեր ոգևորությունը, բայց համակվենք իրապաշտությամբ, շարունակենք մնալ երագող, բայց սթափ դատողությամբ»:

Սեպտեմբերի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդը, ամփոփելով հանրաքվեի արդյունքները, Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն:

Գերագույն խորհրդի կողմից անկախության հռչակումից հետո տասնյակ պետություններ ճանաչեցին Հայաստանի Հանրապետությունը: Առաջինը Լիտվան է, որ ՀՀ-ն ճանաչել է դեռ մինչև անկախության հռչակումը՝ 1991 թ. օգոստոսի 14-ին: Ապա 1991 թ. ընթացքում եւս 47 պետություն ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը:

Հայաստան

Անկախության տոնը հրավեր է վերաթեւորելու մեր անցած ուղին. Գարեգին Բ



Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն ուղերձ է հղել ՀՀ անկախության տոնի առիթով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի փոխանցմամբ, ուղերձում ասվում է. «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Անկախության տոնի բերկրաշատ առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ ի Հայաստան եւ ի սփյուռք աշխարհի:

Պատմական ու նվիրական է այս օրը: 1991 թվականին մեր ժողովուրդը իրականացրեց անկախ ու ազատ ապրելու դարավոր իր երազանքը եւ հաղթահարելով պատերազմի ու շրջափակման դժվարությունները՝ բարձր գիտակցությամբ ու աննահանջ պայքարով ամրացրեց հայրենի պետականության հիմքերը:

Անկախության տոնը հրավեր է վերաթեւորելու մեր անցած ուղին՝ նոր կորովով ու եռանդով, հայրենվեր գործերով շենացնելու մեր երկիրը եւ այս տոնի պանծալի խորհրդով միշտ նորոգ պահելու մեր ուխտը առ հայրենին՝ ունկնդիր աստվածաշնչյան խոսքին, թե՛ ամենքս կոչված ենք ազատության եւ սիրով միմյանց ծառայելու (Գաղ. 5:13):

Մեր աղոթքն է, որ Աստված Իր Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո միշտ անվրդով ու խաղաղ պահի մեր հայրենիքը եւ առատապես օրհնի, գորակից ու օգնական լինի հավատավոր մեր ժողովրդին՝ արգասավորելով հանուն մեր երկրի հզորացման բոլոր ջանքերը:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն ձեզ բոլորիդ հետ: Ամեն»:

Ռուսաստանը ստեղծում է հակաօդային պաշտպանության միասնական համակարգ - Հայաստանի, Արդրզստանի եւ Տաջիկստանի հետ

Ռուսաստանը ծրագրում է Հայաստանի եւ ՀԱՊԿ երկու այլ դաշնակիցների՝ Արդրզստանի եւ Տաջիկստանի հետ ստեղծել միասնական հակաօդային պաշտպանության համակարգ:

Ինչպես հաղորդում է TACC-ը, հայ-ռուսական համաձայնագրի նախագիծը՝ Կովկասի տարածաշրջանում միասնական համակարգի ստեղծման վերաբերյալ անցել է ներպետական համաձայնեցման փուլը եւ պատրաստվում է ստորագրման:

«Հուսով եմ՝ այս տարի կավարտվի համաձայնեցումը», - ասել է ՌԴ գլխավոր շտաբի պետ, Օդատիեզերական ուժերի հրամանատարի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Պավել Կուրաչենկոն:



Նմանատիպ համաձայնությունները Արդրզստանի եւ Տաջիկստանի հետ գտնվում են ներգերատեսչական համաձայնեցման փուլում:

Հիշեցնենք, որ ԱՊՀ մասնակից պետությունների Պաշտպանության նախարարների խորհրդին կից ՀՕՊ հարցերով համակարգող հանձնաժողովի հերթական նիստը տեղի կունենա 2016թ. ապրիլին Տվերում:

Նախագահը ելույթ է ունեցել ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի նստաշրջանում



Նախագահ Սերժ Սարգսյանը սեպտեմբերի 29-ին Նյու Յորքում մասնակցել է ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 70-րդ նստաշրջանին, որտեղ հանդես է եկել ելույթով:

Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 70-րդ նստաշրջանում

Հարգելի նախագահ Լիկետոֆո, Շնորհավորում եմ Ձեզ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր վեհաժողովի 70-րդ նստաշրջանի նախագահի պատվավոր պաշտոնում ընտրվելու կապակցությամբ: Վստահ եմ, որ Ձեր ղեկավարությամբ հորեյանական այս նստաշրջանը կարդարացնի բոլորիս ակնկալիքները:

Հարգելի՛ պատվիրակներ, Տիկնայք եւ պարոնայք, Շնորհավորում եմ նաև մեզ բոլորիս Միավորված ազգերի կազմակերպության 70-րդ տարեդարձի կապակցությամբ:

Այս կազմակերպության ստեղծումը մարդկության մեծագույն նվաճումներից է, որը ժողովուրդներին համախմբել է՝ միավորելով ընդհանուր իղձերի և սկզբունքների շուրջ: Անցած 70 տարիները բնորոշվեցին կարևորագույն դրական զարգացումներով՝ վերջ դրվեց գաղութատիրությանը, ռասայական խտրականությանն ու ապարտեիդին:

Աշխարհի ժողովուրդներին հնարավորություն տրվեց ինքնորոշվելու, պետականություն կերտելու և իրենց ճակատագիրը տնօրինելու իրենց իսկ ստեղծած պետությունում՝ ՄԱԿ-ի անդամների թիվը 51-ից հասցնելով 193-ի:

Այս բոլոր նվաճումներով հանդերձ՝ պետք է խոստովանենք, որ ներկայում աշխարհը կանգնած է նոր մարտահրավերների առջև՝ ահաբեկչություն, ծայրահեղականություն, անհանդուրժողականություն, տնտեսական ճգնաժամեր, կլիմայի փոփոխություն, թմրամիջոցների, զենքի և մարդկանց ու մարդկային օրգանների թրաֆիքինգ, միգրացիոն ճգնաժամ և այլն: Այս մարտահրավերների շարքը երկար է: Եվ հենց դրանց դեմ պայքարելու անհրաժեշտությունն է, որ մեզ պարտավորեցնում է վճռականորեն վերահաստատել մեր համատեղ հանձնառությունն այս կազմակերպության առաքելությանն ու նրա Կանոնադրությանը:

Տիկնա՛յք և պարոնա՛յք, Անցյալ տարի՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախաշեմին, ես այս ամբիոնից անուն առ անուն շնորհակալություն հայտնեցի Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրներին՝ կոչ անելով ողջ միջազգային հանրությանը ճանաչման ու դատապարտման միջոցով ցեղասպանությունների կրկնության դեմ պայքարին նոր թափ հաղորդել:

Այսօր նույն այս ամբիոնից շնորհակալություն եմ հայտնում Հռոմի Պապ Փրանցիսկոսին և հիշատակում նրա կողմից մատուցված պատմական պատարագը, Եվրոպայի խորհրդարանին և մատնանշում նրա ընդունած բանաձևը, Գերմանիայի Նախագահին և վստահեցնում, որ նրա հայտնի ելույթն այսուհետ լինելու է մեր ժողովրդի պատմության էջերում, Ավստրիայի, Բոլիվիայի, Բրազիլիայի, Լյուքսեմբուրգի, Նիդերլանդների, Չիլիի օրենսդիր մարմիններին, բազմաթիվ երկրների նահանգային և քաղաքային խորհուրդներին, ինչպես նաև տասնյակ ու հարյուրավոր հասարակական-քաղաքական կառույցներին: Ծնորհակալություն եմ հայտնում Ռուսաստանի, Ֆրանսիայի, Կիպրոսի, Սերբիայի նախագահներին, ինչպես նաև բազմաթիվ երկրների պատվիրակություններին սպրիլի 24-ին Երևանում Ցեղասպանության զոհերի ոգեկոչման արարողությանը մասնակցելու համար:

Ցեղասպանությունների կանխարգելումը միջազգային օրակարգում պահելու մեր հաստատակամության մասին եմ վկայում Մարդու իրավունքների խորհրդում մեր կողմից պարբերաբար առաջադրվող բանաձևերը, որոնցից վերջինն ընդունվել է այս տարի: Դրա հիման վրա էլ օրեր առաջ այս վեհաժողովը դեկտեմբերի 9-ը հռչակեց «Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի ու արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր»:

Հարգելի՛ ներկաներ, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորումը շարունակում է մնալ կարևորագույն խնդիրներից մեկը մեր տարածաշրջանում: Պետք է նշեմ, որ Ադրբեջանի վարած ագրեսիվ քաղաքականության արդյունքում այսօր ոչ միայն էական առաջընթաց չկա խնդրի կարգավորման բանակցային գործընթացում, այլև արձանագրվել է լարվածության աճի միտում: Նավթի վրա

կառուցված տնտեսության սասանման պայմաններում հասունացող ժողովրդական ցատուճը խեղդելու համար այդ երկրի բռնակալ ռեժիմը խայտառակ ճնշումները գործիք է դարձրել, ինչը, սակայն, այլևս անբավարար է համարում: Հիմա նրան սեփական հասարակության ուշադրությունը շեղող պատկերներ են պետք շփմանշարուն գծից: Ցանկանում եմ վեհաժողովի ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ Ադրբեջանը, ի լրումն տարատեսակ սադրիչ գործողությունների, արդեն սկսել է կիրառել խոշոր տրամաչափի հրետանի՝ կրակի տակ պահելով ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանամերձ շրջանների խաղաղ բնակավայրերը: Ընդամենը մի քանի օր առաջ Հայաստանի սահմանամերձ գոտում ադրբեջանական ռմբահարման զոհ դարձան երեք կին՝ իրենց տանը, իրենց այգում խաղող աշխատող հայ կանայք: Հարց՝ կա՞ որևէ բանական արարած, ով կարող է որևէ չխեղված տրամաբանություն ցույց տալ նման վայրագության մեջ: Մեզ համար արդեն ակնհայտ է՝ Ադրբեջանի ղեկավարությունը անդառնալիորեն կորցրել է ոչ միայն իրականության զգացողությունը, այլև մարդկային բոլոր նորմերը:

ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի նախագահների համատեղ 5 հայտարարություններն ու ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերը լիովին արհամարող Ադրբեջանի՝ նման ագրեսիվ քաղաքականության շարունակվելու դեպքում Հայաստանին այլ ընտրություն չի մնում: մենք կիրականացնեք անհրաժեշտ իրավական և ռազմաքաղաքական քայլերը՝ ապահովելու Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգությունն ու խաղաղ զարգացումը:

Թեև բոլորի համար էլ վաղուց ակնհայտ է, թե որ կողմն է հրահրում հրադադարի խախտումները, նշեմ սուկ մի քանի փաստ:

Տարօրինակ չէ՞ արդյոք, որ Ադրբեջանը տարիներ շարունակ համառորեն հրաժարվում է դիպուկահարներին հետ քաշելու և հրադադարի խախտումների մեխանիզմ ստեղծելու՝ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների առաջարկից: Հարց է առաջանում ինչի՞ց է վախենում Ադրբեջանը:

Տարօրինակ չէ՞, որ Ադրբեջանում հյուրընկալված Եվրոպական խաղերի ընթացքում, երբ նրանց անհրաժեշտ էր կայունության պատկեր, գրեթե ոչ մի կրակոց չի հնչել սահմանին, մինչդեռ խաղերից անմիջապես հետո, դրանք լայնորեն վերսկսվեցին: Չեմ ակնկալում, որ հավատաք որևէ կողմի պնդումներին, ընդամենն ակնկալում եմ, որ ապավինեք տրամաբանությանը:

Տարօրինակ չէ՞, որ 21-րդ դարում մեր հարևանն ամեն օր, առանց հոգնելու, հպարտանում է սպառազինությունների գերկուտակմամբ և ռազմական բյուջեի բազմապատկմամբ, որ համառորեն շարունակում է հանդես գալ պատերազմը վերսկսելու սպառնալիքով, ընդ որում դա անում է պետության ղեկավարի մակարդակով:

Կարծում եմ՝ այժմ բոլորի համար է ակնհայտ, թե ինչու էր Հայաստանը տարիներ շարունակ հետևողականորեն հորդորում միջազգային հանրությանը ոչ թե ընդհանրական, այլ հասցեական հայտարարություններ անել հրադադարի խախտումների վերաբերյալ: Մենք պետք է հասկանանք, որ խաղաղությանը և անվտանգությանը սպառնացող նախանշանները քողարկելու փորձերը կարող են աղետալի հետևանքներ ունենալ:

Հարգելի՛ գործընկերներ, Այսօր մենք ականատեսն ենք Մերձավոր Արևելքում տեղի ունեցող անմարդկային դաժանությունների: Կրոնական

անհանդուրժողականությունը հանգեցրել է անդառնալի հետևանքների: Մենք ամենաուղղակի կերպով ենք զգում տեղի ունեցող վայրագությունները, քանզի դրանց հետևանքով ոչ միայն ոչնչացվում են հայկական հոգևոր և մշակութային ժառանգության նմուշները, այլև սպանվում և փախստական են դառնում Իրաքում և Սիրիայում բնակվող բազմաթիվ հայեր: Սիրիացի ժողովրդի համար ծանր ժամանակաշրջանում դժվարությունները կհսում է նաև դարերով այդ տարածքներում ապրող հայությունը: Մենք մեր ուժերի ներածին չափով փորձում ենք օժանդակել փախստականներին. մինչ օրս Հայաստանն ընդունել է ավելի քան 16 հազար փախստական Սիրիայից: Նրանց ընդունման թվով Հայաստանն առաջիններից մեկն է Եվրոպայում:

Հայերը լավ գիտեն փախստականի տարագիր ճակատագիրը: Հայոց ցեղասպանության զոհերի թիվն անհամեմատ մեծ կլիներ, իսկ վերապրածների ճակատագիրը՝ շատ ավելի դժգոհ, եթե այդ ծանր շրջանում մեր ժողովրդի կողքին չկանգնեին մեր բարեկամ երկրները: Այսօր հարկ է արժանին մատուցել Գերմանիային, Շվեդիային և մյուս երկրներին՝ ցուցաբերվող մարդասիրության համար: Ապաստան տալով հարյուր հազարավոր փախստականների՝ նրանք վերահաստատեցին, որ օգնությունը պարտադիր է թե՛ իրավական, թե՛ մարդասիրական տեսանկյունից: Հարգելի՛ գործընկերներ,

Այս տարի բոլորս ակնատես եղանք, թե ինչպես միասնական և համարժեք գործողությունների արդյունքում հնարավոր դարձավ հարթել միջազգային նշանակության կնճռոտ խնդիրներից մեկը: Մեր անմիջական հարևանի՝ Իրանի Իսլամական Հանրապետության միջուկային ծրագրի շուրջ ձեռք բերվեց պատմական նշանակության համաձայնություն: Շրջադարձային այդ պայմանավորվածությունն անխոս նպաստելու է համաշխարհային մակարդակով ճգնաժամային իրավիճակների հանգուցալուծմանն ու փոխադարձ վատառության ամրապնդմանը, ինչը հնարավոր եղավ երկարատև ու հետևողական քաղաքական և դիվանագիտական ջանքերի շնորհիվ:

Այս ամենը վկայում է, որ համապատասխան կամքի առկայության, հակասությունների հարթեցման և համագործակցային ոգու շեշտադրման պարագայում իսկապես կարելի է բարդագույն խնդիրների համար լուծումներ գտնել: Այս ամբիոնից ցանկանում եմ ևս մեկ անգամ շեշտել դիվանագիտական ջանքերի կիրառման կարևորությունը՝ հատկապես փակ սահմանների բացառման նպատակով: Հայաստանը, որի հարևանները անօրինական շրջափակում են իրականացնում, անթույլատրելի է համարում 21-րդ դարում միջմշակութային, մարդկային շփումները խաթարող և առևտրային կապերի համար արհեստական խոչընդոտներ ստեղծող անհեռատես քաղաքականությունը: Այս համատեքստում կարևորում ենք դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների հարցերով ՄԱԿ-ի համաժողովների պարբերաբար անցկացումը: Մենք պատրաստակամ ենք ներդնելու մեր ջանքերը այս գործում, այդ թվում նաև թեմայի շուրջ միջանկյալ աշխատաժողովներ հյուրընկալելով մեր երկրում:

Պարո՛ն նախագահ, Ավարտելով խոսքս՝ ուզում եմ միանալ բոլոր այն ելույթ ունեցողներին, ովքեր միահամուռ պայքարի կոչ են անում ընդդեմ խավարի, վանդալիզմի և ատելության: Այս պայքարում չկան մեծ և փոքր երկրներ, յուրաքանչյուրն

ունի իր դերը: Հայաստանը պատրաստ է իր մասնակցությունը բերել մեր ընդհանուր պայքարին: Ծնորհակալություն:

Սերժ Սարգսյանը ցավակցական հեռագիր է հղել Մուրադ Մուրադյանի մահվան կապակցությամբ



Նախագահ Սերժ Սարգսյանն սեպտեմբերի 9-ին, ցավակցական հեռագիր է հղել Մուրադյանների ընտանիքին՝ անվանի պետական գործիչ, Երևանի նախկին քաղաքապետ, Երևանի և Գյումրու պատվավոր քաղաքացի Մուրադ Մուրադյանի մահվան կապակցությամբ: Այս մասին տեղեկացնում է ՀՀ նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժինը:

«Մուրադ Մուրադյանի իր երկարամյա գործունեությամբ մեծ ավանդ է ներդրել մեր երկրի շենացման, մասնավորապես՝ Երևանի և Գյումրու զարգացման գործում, արժանացել հայրենիքի բարձր պարգևներին:

Նա իր հայրենանվեր գործունեությունը արդյունավետորեն շարունակել է նաև Հայաստանի անկախության տարիներին, երկար տարիներ եղել Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ներման հանձնաժողովի նախագահը:

Խորին ցավակցություն եմ հայտնում ճանաչված գործչի ընտանիքին, հարազատներին, մերձավորներին», -ասված է ՀՀ նախագահի ցավակցական հեռագրում:

Մահացել է Երևանի նախկին քաղաքապետը



Կյանքի 85-րդ տարում վախճանվել է պետական գործիչ, 1975-85 թթ. Երևանի քաղաքապետ, Երևանի պատվավոր քաղաքացի Մուրադ Մուրադյանը: Մուրադ Հովհաննեսի Մուրադյանը ծնվել էր ծնվ. 26 հոկտեմբերի 1930թ., Լենինականում: ԽՍՀՄ անդամ 1957 թվականից:

-1965-1967թթ. - ՀԿԿ Լենինականի քաղաքային կոմիտեի արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչ, ՀԿԿ Կենտկոմի թեթև ու սննդի արդյունաբերության բաժնի վարիչի տեղակալ:
-1967թ. ընտրվել է ՀԿԿ Լենինականի քաղկոմի երկրորդ քարտուղար:
-1968թ. ընտրվել է ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար:
-1969 թվականից ՀԿԿ ԿԿ բյուրոյի անդամության թեկնածու:
-1975թ. ընտրվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ:
-1985-1988թթ. - ՀԿԿ կենտկոմի քարտուղար, միաժամանակ շինարարության և քաղաքային տնտեսության բաժնի վարիչ:
-1988-1990թթ. - Հայկոռայի նախագահ:
Եղել է ԽՍՀՄ և ՀԽՍՀ Գերագույն խորհուրդների պատգամավոր:
-2008 թվականից ՀՀ նախագահին առընթեր ներման հարցերի հանձնաժողովի նախագահն էր:

Չինաստանը մեծապես շահագրգիռ է Հայաստանի հետ տնտեսական համագործակցության ընդլայնմամբ



Վարչապետ Հովիկ Աբրահամյանն ընդունել է Հայաստանում Չինաստանի արտակարգ և լիազոր դեսպան Թյան Էրլունին: Չրուցակիցները քննարկել են հայ-չինական հարաբերություններին, մասնավորապես, վարչապետ Աբրահամյանի՝ Չինաստան կատարելիք աշխատանքային այցին առնչվող հարցերի լայն շրջանակ: Վարչապետը բարձր է գնահատել հայ-չինական համագործակցությունը տարբեր ոլորտներում և կարևորել երկու երկրների միջև տնտեսական կապերի հետագա զարգացման ու խորացման ուղղությամբ համատեղ նոր ծրագրերի իրականացումը:

Դեսպան Թյան Էրլունը Հովիկ Աբրահամյանին է փոխանցել Չինաստանի վարչապետի ջերմ ողջույնները և ընդգծել, որ իր երկիրը մեծապես շահագրգիռ է Հայաստանի հետ տնտեսական համագործակցության ընդլայնմամբ: Դեսպանը վստահություն է հայտնել, որ ՀՀ վարչապետի այցը Չինաստան նոր ազդակ կհաղորդի հայ-չինական հարաբերությունների հետագա զարգացմանը և կնպաստի երկու երկրների միջև տնտեսական կապերի խորացմանը:

Հայաստանում թուրքական անվանումներով մնացած գյուղերը կվերանվանվեն



Հայաստանում թուրքական անվանումներով մնացած գյուղերը կվերանվանվեն: Այս մասին համապատասխան որոշումը կայացվել է սեպտեմբերի 17-ի Կառավարության նիստում: Նշենք, որ թուրքական անվանումներով գյուղերից բացի, որոշում է կայացվել վերանվանել պարսկական անվանումով մեկ գյուղ: Թուրքական անվանումներով գյուղերից են Տավուշի մարզի Թուվուզ գյուղը, որը վերանվանվել է Տավուշ: Սյունիքի մարզի Աղարա գյուղը, որը պաշտոնապես վերանվանվել է Ալվանք, Հալաջը՝ Աճանան, Մոֆյուն՝ Նժդեհ, Վերին Գյողաքուն՝ Վարդավանք, Փայահանը՝ Նոր Աստղաբերդ: Դրանց հետ մեկտեղ Նյուվադի գյուղը (պարսկերենից թարգմանաբար նոր հարթավայր) կվերանվանի Նոնաձոր: Եվս մեկ գյուղի անվանում՝ Ծուռնուխ, կմնա նույնը:

ՀԷՑ-ի վաճառքից հետո սակագների վերանայում չի լինի



Կառավարությունը մտավախություն չունի, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն վաճառքից հետո կարժանանա «Նաիրիտ» գործարանի ճակատագրին: Այս մասին այսօր՝ սեպտեմբերի 17-ին, կառավարության նիստից հետո լրագրողներին ասաց Էներգետիկայի և բնական պաշարների նախարար Երվանդ Չախարյանը: «Այսօր հանձնարարվեց, որպեսզի ներկայացված բոլոր փաստաթղթերը, առքուվաճառքի պայմանագիրը ուսումնասիրվեն: Մնացած հարցերին սպառիչ պատասխաններ կտրվեն որոշ ժամանակ անց», - ասաց Երվանդ Չախարյանը:

«Արցին» հնարավոր է, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի վաճառքից հետո էլեկտրաէներգիայի սակագինը վերանայվի, Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարը պատասխանեց, որ սակագինն արդեն գործում է եւ կառավարությունը սակագնի վերաբերյալ վերջնական դիրքորոշումը կհայտնի հանձնաժողովում կատարվող ուսումնասիրություններից հետո:

Հայաստանը համաշխարհային ռազմական հզորության վարկանիշում 74-րդ տեղում է



Հայաստանը համաշխարհային ռազմական հզորության վարկանիշային աղյուսակում զբաղեցրել է 74-րդ հորիզոնականը, հայտնում է [Global Firepower](#)-ը: Վարկանիշը կազմելիս հաշվի են առել ավելի քան 50 գործոն՝ սկսած ռազմական տեխնիկայի քանակից եւ ենթակառուցվածների մասշտաբներից մինչև մարդկային ռեսուրսներն ու ռազմական ոլորտին հատկացվող ծախսերը:

Հարեւան Ադրբեջանը զբաղեցնում է 63-րդ տեղը՝ ավելի քան 3 մլրդ դոլար ռազմական ըլուջեով, Վրաստանը 75-րդ տեղում է, իսկ Թուրքիան՝ 10-րդ: Առաջին հորիզոնականը զբաղեցնում է ԱՄՆ-ը, իսկ նրան հաջորդում են Ռուսաստանն ու Չինաստանը:

Ես դեմ եմ սահմանադրական փոփոխություններին. Վարդան Օսկանյան



Սահմանադրական փոփոխությունների նպատակը ոչ թե Հայաստանում կառավարման խորհրդարանական համակարգ հաստատելն է, այլ պարզապես նախագահի պաշտոնը՝ այնպես, ինչպես կա, վերացնելը: Այս մասին facebook-ի իր էջում գրել է ԱԳ նախկին նախարար եւ նախկին ԲՀԿ-ական, պատգամավոր Վարդան Օսկանյանը:

Նա մասնավորապես գրել է.

«Մի շատ հարգարժան մարդ, ձեզ բոլորին քաջ ծանոթ՝ կուսակցական-քաղաքական գործիչ, այս թեմայի շուրջ գրուցելիս ինձ ասաց հետևյալը. «Մերժ Սարգսյանը վախենում է հաջորդ Մերժ Սարգսյանից»:

Շատ դիպուկ եւ բազմաբովանդակ է ասված: Մտածե՛ք դրա մասին:

Իրոք, այս փոփոխությունների ելակետը, գլխավոր նպատակը, էությունը նախագահի պաշտոնի վերացումն է: Ոչ թե նրա համար, որ այն պետք չէ, այլ որովհետև ինչ-որ մեկի, մի խումբ մարդկանց եւ/կամ քաղաքական ուժի, այլևս ձեռնտու չէ դա:

Այլ կերպ ասած՝ մենք ոչ թե խորհրդարանական համակարգի կարիքն ենք զգացել, ուստի անխուսափելիորեն հրաժարվում ենք նախագահի պաշտոնից, այլ հակառակ կողմից ենք եկել՝ ուզեցել ենք հենց այդ պաշտոնը վերացնել, հետևապես անխուսափելիորեն անցում ենք կատարում խորհրդարանական համակարգի:

Հայաստանի այսօրվա ներքին, արտաքին եւ տնտեսական ահազանցող մարտահրավերների, խորացող արտագաղթի պայմաններում սահմանադրական փոփոխությունների այս փորձը կարող է իսկական փորձանք դառնալ երկրի գլխին:

Ես դեմ եմ սահմանադրական փոփոխություններին եւ կոչ եմ անում մեր քաղաքացիներին ՈԶ ասել այդ փոփոխություններին»:

«ՀԷՑ»-ը կարող են վաճառել օֆշորային ընկերության



«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունը կարող են վաճառել Կիպրոսում գրանցված օֆշորային ընկերության:

Այսօր՝ սեպտեմբերի 17-ին, կառավարության նիստում ՀՀ Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Երվանդ Չախարյան հայտարարել է, որ «ՀԷՑ»-ի 100 տոկոսի սեփականատեր «Inter RAO Holding B. V.» ընկերությունը հայտ է ներկայացրել ՀԷՑ-ի բաժնետոմսերը «Լիորմանդ Հոլդինգզ Լիմիթեդ»-ին օտարելու վերաբերյալ:

Մոտ ժամանակներս Էներգետիկայի նախարարությունը, ինչպես նաեւ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը կուսումնասիրեն հայտը եւ համապատասխան եզրակացություն կներկայացնեն:

Նշենք, որ Liormand Holdings Limited ընկերությունը գրանցված է Կիպրոսում 2010 թվականի նոյեմբերից: Համապատասխան տվյալները հրապարակել է i-cyprus.com ոչ պաշտոնական [կայքը](#), որը տեղեկություններ է ներկայացնում Կիպրոսի ռեգիստրում գրանցված ձեռնարկությունների մասին:

Հիշեցնենք, որ օգոստոսի 31-ին ՀԷՑ-ը աուդիտորի մրցույթ է հայտարարել: Նախնական գնահատականներով, աուդիտը տեղի կունենան մոտ երեք ամիս անց: Բացի այդ, մինչև դեկտեմբերի 3-ը Deloitte & Touche CIS կոնսալթինգային ընկերությունը պետք է ավարտի էներգետիկ համակարգի վերլուծությունը, որը կներկայացնի կառավարությանը:

Իրան-Հայաստան երկաթուղին իրական ուրվագիծ է ստանում. իրանագետ



Հայաստանը Պարսից ծոցը Սեւ ծովին կապող ամենակարճ ուղին է: Այս կապը կարող է ապահովել Իրան-Հայաստան երկաթուղին: Այս մասին սեպտեմբերի 15-ին՝ «Իրան. Պատժամիջոցների չեղարկում եւ հնարավոր տարածաշրջանային իրադարձություններ» թեմայով քննարկման ժամանակ, հայտարարեց ԵՊՀ Արեւելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոնի վարիչ Վարդան Ռսկանյանը:

Իրանագետի կարծիքով Իրան-Հայաստան երկաթուղին իրական ուրվագիծ է ստանում, եթե հաշվի ենք առնում հայ պաշտոնյաների հայտարարությունները եւ չինական կողմի առաջարկները: «Ներկայիս աշխարհաքաղաքական պայմաններն այնպես են դասավորվել, որ Հայաստանը ոչ միայն չի կորցրել իր կարելիությունը Իրանի համար, այլ նաեւ որոշակի հնարավորություններ է ստացել: Դա առաջին հերթին վերաբերում է Թուրքիայում ծավալվող իրադարձություններին: Փաստացիորեն Թուրքիայի տարածքում պատերազմ է ծավալվում, քուրդ ապստամբները մի քանի անգամ նավատար եւ գազատար խողովակներ են պայթեցրել: Այդ առումով Թուրքիան անհուսալի երկիր է դարձել եւ փաստացի մրցակից չէ Հայաստանի համար: Մեր մյուս մրցակիցը Ադրբեջանն է, որը կարող է միջանցք հանդիսանալ Իրանից դեպի հյուսիս եւ Եվրոպա, սակայն այստեղ նույնպես լուրջ խնդիրներ կան», - ընդգծեց Վարդան Ռսկանյանը:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնում մեկնարկել է մյուռնօրհներթի արարողությունը

Մայր Աթոռի Ս. Տրդատի բաց խորանում սեպտեմբերի 27-ին՝ ժամը 17:00-ին, մեկնարկել է մյուռնօրհներթի արարողությունը, որի պատրաստությունները սկսվել են դեռեւս 40 օր առաջ:

Մրբալույս հեղուկի օրհնության առթիվ կայանալիք միջոցառումները կշարունակվեն նաեւ սեպտեմբերի 28-ին եւ 29-ին:

Մասնավորապես, սեպտեմբերի 28-ին՝ ժամը 10:00-ին,

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում կկատարվի բարեխոսական կարգ եւ շրջայց:

Ժամը 12:00-ին Մայր Տաճարի առջև՝ Գարեգին Ա Կաթողիկոսի շիրիմի մոտ, նախատեսվում է Հայրապետի հոգեհանգստյան աղոթք: Ժամը 12:30-ին Մայր տաճարի շրջափակում տեղի կունենա «Գարեգին Ա» կրթական կենտրոնի բացումը, իսկ 13:30-ին, կրկին Մայր տաճարի շրջափակում, կկատարվի Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված Խաչքարերի օրհնություն եւ օծում:



Ժամը 15:00-ին Գեւորգյան ճեմարանում կբացվի «Սրբալույս Մյուռն» խորագրով կերպարվեստի ցուցահանդես:

Միջոցառումները կամփոփվեն Արամ Խաչատրյանի անվան ֆիլիարմոնիայի մեծ դահլիճի նախասրահում կայանալիք «Հայոց Եկեղեցին միջազգային փոստային բացիկներում» լուսանկարների ցուցահանդեսով (որին կհաջորդի մյուռնի օրհնությանը նվիրված համերգային ծրագիրը) եւ Մայր Աթոռի «Ալեք եւ Մարի Մանուկյան» Գանձատանը կայանալիք Սրբալույս Մյուռնին նվիրված նամականիշերի մարման արարողությանը:

Նշենք, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի ժամանակներից ի վեր Սուրբ Մյուռնին (օրհնված կարագ կամ յուղ) օրհնությունը վերապահվում էր միայն Եկեղեցու նվիրյալ հովվապետին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Սուրբ Մյուռնօրհներթը կատարվում է յոթ տարին մեկ անգամ: Միյուռնի տարբեր թեմերից ուխտագնացների խմբեր, ինչպես նաեւ աշխարհի տարբեր ծայրերից հավատացյալներ են ժամանում Հայաստան՝ այս կարելու իրադարձությանը ներկա գտնվելու համար:

Շնորհաբեր ու քաղցրաբույր մյուռնը Ամենայն Հայոց Հայրապետությունից ուղարկվում է բոլոր թեմերին ու եկեղեցիներին: Հնուց ի վեր սա միջոց էր ծառայում պահելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսության հեղինակությունը՝ որպես բացառիկ ուխտ հայ հավատացյալ հոտի հետ: Սուրբ մյուռնն օգտագործվում է մկրտության եւ դրոշմի խորհրդի ժամանակ, հոգեւորականների ձեռնադրության, եպիսկոպոսների եւ հոգեւորականների օծման, ջրօրհների արարողության, ինչպես նաեւ նոր եկեղեցիների եւ պատկերների օծման ժամանակ:

Օրհնությունից քառասուն օր առաջ ձիթենու մաքուր յուղով լի կաթսան դրվում է Մայր Տաճարի բեմում եւ ծածկվում նրբախյուս շղարշով: Հնում այն ծածկվում էր յոթ շաքր շղարշով: Զառասուն օր շարունակ, երեկոյան

ժամերգությունից հետո, հոգեւոր պաշտոն է կատարվում շարականներով, արդթներով եւ սուրբգրային ընթերցվածներով: Մյուռոնօրինքի նախատոնակին՝ գիշերը, հսկում է կատարվում, իսկ հաջորդ օրը լինում է օրհնության հանդիսավոր շնորհաբաշխությունը: Առավել հին շրջանում Մյուռոնօրինքը տեղի էր ունենում Ավագ Հինգշաբթի: Վերջին երկու-երեք դարերում այժմյան խմբագրությամբ կանոնակարգված «Մաշտոցները» հրահանգում են օրհնությունը կատարել Ավագ Հինգշաբթի, Հոգեգալստյան տոնին կամ էլ պատշանավոր որեւէ մեկ այլ օր: Հաշվի առնելով, որ օրհնության ժամանակ տարբեր կողմերից մեծաթիվ ուխտավորներ են գալիս եւ նկատի ունենալով Արարատյան դաշտի եղանակային յուրահատկությունները եւ համանման մի շարք գործոններ՝ վերջին հարյուրամյակում Մյուռոնի օրհնությունը սովորաբար կատարվում է աշնանը:

Արեւմտյան Հայաստան

Ուղիղ 60 տարի առաջ այս օրը Թուրքիայում կոտորում եւ թալանում էին հայերին ու հույներին
14:27, 07.09.2015

Տարածաշրջան: Հայաստան, Թուրքիա
Թեմա: Զարգացման ուղի, Վերածնունդ



Ուղիղ 60 տարի առաջ՝ 1955-ի սեպտեմբերի 6-7-ը, Ստամբուլում եւ Իզմիրում կազմակերպված կոտորում, թալանում եւ բռնաբարում էին հայերին եւ հույներին: Իսկ պետությունը հանգիստ հետեւում էր իր կազմակերպածին: Հիշյալ դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թուրք խուժանի գանգվածային ջարդարարությունը եւ թալանը լավ կազմակերպված էր, իսկ թուրքական իշխանությունը այք փակեց դրա վրա՝ թողնելով, որ մարդասպանները Ստամբուլը մաքրեն ազգային փոքրամասնություններից՝ հույներից եւ հայերից: Թուրք խուժանին, իրենց արյունոտ գործն սկսելու համար առիթ էր պետք, եւ այդ առիթն էլ ստեղծեցին: Հունական կառավարության կողմից Սալոնիկում թուրքերին նվիրաբերած «Աթաթուրքի տուն թանգարան»-ի բակում ինչ որ պայթուցիկի տեղադրումը, որն ընդամենը թանգարանի ապակիներն էր կտրել, առիթ հանդիսացավ թուրքերի համար: Թուրքիայի պետական ռադիոկայանը տեղեկացրեց, թե հույները Աթաթուրքի տան մեջ ռումբ են պայթեցրել: Վարչապետի մտերիմներից մեկի կողմից հրատարակվող Istanbul Ekspres-ը կեսօրից հետո

զարմանալի արագությամբ, հասցրեց մոտ 300 հազար տպաքանակով համար հրատարակել, որը պետության կողմից ստեղծված եւ հովանավորվող «Կիպրոսը թուրք է» միության անդամները բաժանեցին ժողովրդի մեջ: Ամեն ինչ ընթանում էր ըստ պլանավորածի: Հայերի, հույների եւ մյուս ազգային փոքրամասնությունների տները, խանութներն ու տաղավարները արդեն հատուկ գույներով նշագրել էին՝ հեշտությամբ ջարդելու ու թալանելու համար: Թուրքերի վայրագությունների ընթացքում սպանվել էր 16 հոգի, որոնցից երեքը հայտնաբերվել էին պարկի մեջ այրված: Վիրավորվել էին 500-ից ավել քրիստոնյաներ: Ընդհանուր հաշվով՝ թալանի էր ենթարկվել 4214 տուն, 1004 գրասենյակ, 73 եկեղեցի, 26 դպրոց եւ այլ հաստատություններ:

Հաստատելու համար, որ այս գանգվածային ջարդերը կազմակերպված են եղել թուրքական պետության կողմից, ինչպես 1915-ի Հայոց ցեղասպանությունը՝ ներկայացնենք թուրքական Atilim կայքի հրապարակումը, որտեղ նշվում է, որ Սալոնիկի Աթաթուրքի տան բակի պայթյունը կազմակերպած Օքթայ Էնգինը, Հունաստանում պայթյունը կազմակերպելու համար մեկ տարի պատիժը կրելուց հետո ազատ է արձակվել եւ տեղափոխվել Թուրքիա, որտեղ էլ սկսվել է իր կարիերայում աննախադեպ վերելքը (նախ, Թուրքիայի կարեւորագույն շրջաններից մեկի՝ Չանքայայի քայմաքան, այնուհետ՝ ոստիկանության գլխավոր վարչության քաղաքական գործերով բաժնի պետ): 1971-ին Օքթայը դառնում է Անվտանգության վարչության պետ եւ 7 տարի պաշտոնավարում: Իսկ 1991-ին նշանակվում է Նեշեհիրի նահանգապետ:

ԱՄՆ-ի Ստամբուլում հյուպատոս Արթուր Ռիչարդը, ԱՄՆ պետքարտուղարություն ուղարկած հաղորդագրության մեջ նշել է, թե սկանառես է եղել, որ թուրքական ոստիկանությունը ոչինչ չէր անում կանխելու վայրագությունները:

1955-ի ջարդերից տարիներ հետո, Թուրքիայի հատուկ նշանակության զինուժերի նախկին պետ Սարրի Յիրմիրեշօղլուն նշել է, թե 1955-ի սեպտեմբերի 6-7-ը հատուկ նշանակության զինուժերի գործն էր, որը հրաշալի կազմակերպվել էր:

Իսկ վերջում հիշեցնենք Թուրքիայի նախկին պաշտպանության նախարարի մի առիթով ասված խոսքը. «Եթե հայերը եւ հույները Թուրքիայում մնային, արդյոք մենք այսպիսի ազգային պետություն կլինեի՞նք»:

Անդրանիկ Բայկոյան

Թուրքիայի Դիարբեքիր նահանգում հայտնաբերվել են վաղ քրիստոնեության դարաշրջանի եկեղեցու ավերակներ

Թուրքիայի Դիարբեքիր նահանգում մի խումբ հնագետներ գտել են մի եկեղեցի, որը կառուցվել էր Հռոմեական կայսրության այն հպատակներից կողմից, որոնք առաջին էին ընդունել քրիստոնեություն, այս մասին հաղորդում է «SÜSÜ»-ը՝ վակայակոչելով Haberler լրատվական պորտալը:

Վաղ քրիստոնեական հուշարձանը հայտնաբերվել է Չինարում՝ Չերգեվան պատմական ամրոցի գտնվելու վայրում: Դիջլե համալսարանի 60 հնագետներից կազմված խմբի ղեկավար Այթաչ Ջոշկունի խոսքով, եկեղեցին ամբողջովին հողի տակ է գտնվում: «Եկեղեցին կառուցված է հողի տակ: Կարելի է ասել, որ սա առաջուր հայտնաբերված կրոնական ծիսակարգային առաջին նման օբյեկտն է, որ վերաբերում է այն դարաշրջանին, երբ

հռոմեացիները նոր էին հեթանոսությունից քրիստոնեության անցել »:

Հավանաբար եկեղեցին Թուրքիայի տարածքում հայտնաբերված ամենահին եկեղեցիներից մեկն է, որը սկսել էին օգտագործել տեղի առաջին քրիստոնյաները:

Շենքի պատերին հնագետները գտել են արամեերեն գրություններ ու քարի վրա փորագրված խաչեր: Դրանց ուսումնասիրության համար հնագետները արամեերենի մասնագետ են հրավիրել:

Դիարբեքիրում թուրք ոստիկանները թալանել են հայ կաթոլիկ եկեղեցին



Դիարբեքիր նահանգի Սուրի շրջանում գտնվող հայ կաթոլիկ եկեղեցին, սույն տարածքում հայտարարված պարետային ժամի ընթացքում, դարձել է թուրք ոստիկանների հարձակման թիրախ:

Ինրպես տեղեկացնում է Akunq.net-ը, Հասարակ թաղամասում գտնվող սույն հազարամյա եկեղեցին մեծապես տուժել է: Ոստիկանները, սակայն, չեն բավարարվել միայն եկեղեցու վրա հարձակմամբ հարձակմամբ. նրանք գողացել են այստեղ գտնվող որոշ պատմական իրեր:

Միջազգային հայերի միության նախագահ Արաթ Քարազյոզյանը գործակալությանը հայտնել է, որ հայերը պատրաստվում են դատական գործ հարուցել՝ այս փաստի կապակցությամբ: Նա նշել է, թե եկեղեցին կրել է մոտ 300 հազար թուրքական լիրա գումարի չափով վնաս:

Քարազյոզյանը նաև ասել է. «Ոստիկանությունը եկեղեցի է մտել՝ կոտրելով այստեղի պատմական դռները: Ակնհայտ է, որ մեծ հարձակում է եղել եկեղեցու վրա: Գողացվել են հախճապակու վրա արված մեր 6 պատմական նկարները, ինչպես նաև՝ մեր պահեստում գտնվող փորագրված պատմական քարերը»:

Հիշեցնենք, որ մինչ այդ էլ Սուրի շրջանում ոստիկանների եւ քուրդ զինյալների միջեւ անդամների միջեւ տեղի ունեցած բախումների հետևանքով տուժել էր նաև Սուրբ Կիրակոս եկեղեցին:

Թուրքի գողացած հայկական Ավետարանի ձեռագիրը Կիպրոսում ցուցադրության է հանվել

Կիպրոսի թուրքական հատվածից գողացված մասունքները սեպտեմբերի 15-ին ցուցադրության են հանվել Կիպրոսի Բյուզանդական թանգարանում:

Ցուցանմուշների թվում է նաև հայկական Ավետարանի ձեռագիրը, որը թվագրվում է 14-րդ դարով: Ձեռագիրը գողացվել է 1963 թվականին, Նիկոսիայի հայկական Սուրբ

Աստվածամայր եկեղեցուց: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է Gibrayer պարբերականը:

Ցուցահանդեսից հետո ձեռագիրը կփոխանցեն վերանորոգման:



Գանձերը, այդ թվում՝ եկեղեցու որմնանկարի կտորներ, սրբապատկերներ, հայկական Ավետարանի ձեռագրեր եւ նախապատմական 40 հնություններ, հայտնաբերվել են 1997 թվականին, Մյունխենում ապրող թուրք դիլերի բնակարանում:

Դրանք վերադարձվել են այն բանից հետո, երբ Գերմանիայի վերաքննիչ դատարանը վերջնական որոշում է կայացրել Թուրքիայի կողմից գրավված Կիպրոսի շրջաններից թուրք մաքսանենգների գողացած գանձերի մասին:

Վանի բերդը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկ մտցնելու համար դիմում են ներկայացրել



Թուրքիան դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ Վանի բերդը համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկելու համար:

Թուրքական Radikal-ի փոխանցմամբ՝ Վանի մշակույթի եւ տուրիզմի վարչության պետ Մուգաֆեր Աքթուրը հայտնել է, թե Վանի բերդը եթե մտնի ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկ, դա Վանին մեծ ճանաչում եւ օգուտ կբերի:

Նշենք, որ Թուրքիան ՅՈՒՆԵՍԿՕ-ին ուղղված դիմումի մեջ շեշտել է Վանի բերդը եւ Վանի քաղաքամեջը (հայկական թաղամաս-խմբ) որպես համաշխարհային ժառանգություն ճանաչել:

Թուրքիայի Իզմիրի նահանգում քուրդ քաղաքապետը հայերենով «Բարով եկաք» է գրել



Թուրքիայի Իզմիր նահանգի Թուզլուջա (Կողբ) քաղաքի մուտքի մոտ 4 լեզվով տեղադրվել է բարի գալուստ մաղթող գրություններ:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Թուզլուջայի քաղաքապետ, քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության անդամ Մեհմեդ Գյուլթեքինը հայտնել է, թե Թուզլուջայի մուտքի մոտ հայերենով «Բարի եկաք» է գրել, քանի որ Թուզլուջան Հայաստանի հետ սահմանակից է, նախկինում Թուզլուջայում հայեր են ապրել ու այն կոչել են Կողբ: Քաղաքապետը շեշտել է, որ չնայած Թուրքիայում շատ տեղանուններ պաշտոնապես փոխվել են, սակայն ներկայում ժողովուրդը շարունակում է դրանք հայկական անուններով կոչել:

«Թուզլուջան մինչ Թուրքիայի հանրապետության ստեղծումը հայկական բնակավայր էր: Ներկայում պահպանվել է հայերի գերեզմանոցը, որը ժողովուրդը հենց հայկական գերեզման է կոչում, մեր հովիտն էլ տեղացիները շարունակում են հայկական հովիտ կոչել: Հայերն այստեղ ապրել են, ստեղծել այս շրջանը, ստեղծել պատմություն: Մենք այդ ամենը հարգեցինք եւ հայերեն գրեցինք «Բարով եկաք»: Մենք հայերեն գրելուց անհանգիստ չենք, ընդհակառակը՝ երջանիկ ենք: Մենք հայերի հետ կրկին բարեկամ ենք լինելու, միասին առեւտուր ենք անելու, տուրիզմ ենք զարգացնելու: Հայերը մեր եղբայրներն են եւ ոչինչ մեզ չի խանգարի», ասել է քուրդ քաղաքապետը: Նշենք, որ NEWS.am-ի տեսախցիկը հայերեն գրությունները տեղադրելու հաջորդ օրը ֆիքսել է այն:



Ռազրի Չարաքոլուն՝ Բինգյոլի Քղի գավառի մասին



Հայտնի թուրք իրավապաշտպան, Հայոց ցեղասպանության մասին բազմաթիվ գրքեր հրատարակած Բիզի հրատարակչատան տնօրեն Ռազրի Չարաքոլուն թուրքական Taraf-ում անդրադարձել է Բինգյոլի Քղի գավառին:

Akunet-ի թարգմանությամբ ներկայացնում ենք Չարաքոլունի հրապարակումը: Քղին Բինգյոլ նահանգի գավառներից է: Վերջին ընտրություններում ԱԶԿ-ն Բինգյոլից երկու, իսկ ԺԴԿ-ն մեկ պատգամավոր ունեցավ: Քղիում ԺԴԿ-ն ստացավ ձայների 49,2 տոկոսը, իսկ ընտրողները 3755-ն էին: Այո՛, սխալ չընկալեցիք՝ երեք հազար յոթ հարյուր հիսունհինգ: Իսկ 2014 թ. ընտրություններում ԺԴԿ-ն ձայների միայն 17 տոկոսն էր հավաքել, իսկ ԺՀԿ-ն 40 տոկոս քվեով առաջին կուսակցությունն էր: Մինչդեռ 2011 թ. ընտրություններում 45 տոկոս ձայնով առաջին տեղում ԱԶԿ-ն էր, իսկ վերջին ընտրություններում 31 տոկոս քվե էր հավաքել:

1915 թ. սկզբներին Քղի գյուղաքաղաքում 3900 հայ էլ մոտ 1000 թուրք/հայ էր ապրում, մինչդեռ գյուղերում հայերի թիվը 37 հազարի էր հասնում: Այն մասնաձագործության, հողագործության եւ անասնապահության ոլորտներում բավականին բարձր արտադրողականության շրջան էր: Այսօր, այնուամենայնիվ, Քղիից դուրս բնակվող քղեցիների թիվը ներկայում Քղիում բնակվողների թվից, ով գիտե՞ քանի անգամ է գերազանցում: Ճիշտ էլրիստանցիների, դերսիմցիների նման... Կարող ենք ասել, որ վերոնշյալ թյուրքուն Քղիին էլ է տիպիկ:

Քրիի անունն առաջին անգամ 1967 թ. լսեցի: Թուլյայ անունով մի ընկեր ունեի, ով բժշկական ֆակուլտետում էր սովորում եւ Թուրքիայի բանվորական կուսակցության անդամ էր: Հիշում եմ, որ նրա մայրը չափազանց անհանգիստ, թախծոտ կին էր: Միշտ անհանգստանում էր աղջկա համար, որ նրա գլխին էլ չգար այն, ինչ եղավ իրենց հետ, քանի որ ձախակողմյան էին: Եթե աղջիկը մի քիչ ուշանար, ուղղակի խուճապի էր մատնվում:

Թերեւս իրավացի էր. մեր եւ մյուս սերունդների գլխով ինչեր անցան...

Տարիներ շարունակ մտածում էի, թե Թուլյայի մոր խոր վշտի տակ ի՞նչ կար արդյոք: Նրա ընտանիքը, ո՞վ գիտի, քանի դժբախտություն է ապրել, ինչեր է տեսել 1895-96 թթ., 1915 թ., 1938 թ....

Երբ ձեռքս վերցրեցի ընկերոջս՝ Օսեփ Թոքթաթի՝ եռալեզու (հայերեն, անգլերեն եւ թուրքերեն) «Ավերակ Քրի» («Փարոս» հրատ., Ստամբուլ, 2015) վերնագրով վերջին գիրք, առաջինը քղեցի այս թախծոտ կնոջը հիշեցի: Օսեփ Թոքթաթն ավելի վաղ հրատարակել է «Վանի արծաթագործությունը» հիասքանչ գիրքը, որը նույնպես եռալեզու է եւ մրցանակի է արժանացել:

Գրքում նաեւ Քրիի շրջակայքը ընդգրկող հին քարտեզ է տեղ գտել: Տեղական պատմության առումով նման գրքերի կարիք շատ կա: Տեղաբնակն այնքան է կարոտ նման գրքերի, որ կարծես ոչ թե նույն երկրում, այլ լուսնի վրա կամ Ավստրալիայում է ապրում... Աշխարհագրական այս տարածքից պատմությունը քերվել-հանվել է:

Բինգյոլը եւ շրջակայքը այն վայրերից են, որտեղ 1915 թ. ցեղասպանության հետեւանքներն ամենաձանր են եղել: Ե՛վ զոհերի, եւ՛ հանցագործների տեսանկյունից հետքերը շարունակվում են ցայսօր: Դեռ «կոտորածներից փրկվածներ» կան, ովքեր քանի-քանի աղետներից հետո էլ համառորեն ապրում են այդ տարածաշրջանում: Սակայն հանցագործներն էլ դեռեւս ազդեցիկ են այդ տարածքում: Այս պատճառով Բինգյոլը համառ պահպանողական մի կառույց ունի, ինչպես օրինակ՝ Աղըյամանն է:

Օսեթ Թոքթաթի գիրքը, որ Քրիին ներկայացնում է նախաքրիստոնեական ժամանակաշրջանից, այդ տարածաշրջանն ու մարդուն հասկանալու առումով շատ կարեւոր ձեռքբերում է: Գիտեմ, որ այն տարիների աշխատանքի արդյունք է: Որպես սկզբնակետ 1915 թ. եմ առանձնացրել, սակայն սխալ չհասկանաք եւ շատ հեռու չգնաք: 1915 թ. Անատոլիայի պատմության եւ աշխարհագրության տեսանկյունից իսկապես սկզբնակետ է, քանի որ Հայկական բարձրավանդակը, Պոնտոսը, Կիլիկիան, Կապադովկիան եւ նման այլ պատմական բնակավայրեր ավերակի վերածվեցին՝ միաժամանակ դառնալով նաեւ գուտ անտիկ պատմական անուններ:

Այս պատճառով 1915 թ. նախորդած պատմությունը հասարակությունը, աշխարհագրությունը, մշակույթը յուրատեսակ ժամանակակից հնագիտություն են:

Միայն թե շատ ցավալի է, որ 100 տարվան նախորդած ժամանակաշրջանը շատ հին պատմություն է դարձել, մոռացվել, ջնջվել է հիշողությունից:

Գրքում նաեւ հիասքանչ աշխարհագրության լուսանկարներ են զետեղվել: Հե՛յ, Թ-անու լեռ, Սյումբուս, Մարդիկ լեռ, հրաշագեղ Արվանք... Օսնագ գյուղի 300 տարեկան թթենիներ: Մի ժամանակ այնտեղ մետաքս էր արտադրվում: Հե՛յ, Տրդատ թագավորի ժամանակներից մնացած Քրիի ամրոցի ավերակներ... Տարածաշրջանի հատուկենտ փրկված ձեռագրեր... Խուրս գյուղը (այսօր՝ Յազգյունու) գրեթե ջնջվել է, քանի որ ուսումնաստենչ մի վայր է եղել, աղջիկ եւ տղա երեխաների համար նախատեսված նախակրթարանի հետ մեկտեղ՝ նաեւ

մանկապարտեզ, ինչպես եւ Ամերիկայից ուղարկված գրքերով լի դպրոցական գրադարան ու ժողովասրահ է ունեցել...

1915 թ. խուրսեցի կանայք եւ տղամարդիկ յոթ օր շարունակ դիմադրել են, որոշները կարողացել են հարևան Դերսիմի աշիրերությունում ապաստանել:

Ներկայում այնտեղ միայն 74 մարդ է ապրում, մինչդեռ նախքան 1915 թ-ը՝ գյուղում 1700 բնակիչ է եղել՝ 300 տուն հայ, 2 տուն քուրդ: Հայտնի հայ գրող Թվատինցին (Հովհաննես Հարությունյան) այդ գյուղում ուսուցիչ է եղել, ով ավելի ուշ Ստամբուլի Կեդրոնական վարժարանի տնօրենն էր դառնալու: 1915 թ. հուլիսին Խարբերդում նա, ընտանիքի հետ միասին, Դեր Զորի ճանապարհին է բռնել: Թվատինցին հայկական գյուղագրության ամենահզոր գրողներից մեկն էր, եւ եթե չսպանվեր, ով գիտե՞ ինչպիսի ստեղծագործություններ կգրեր, գուցե նաև Քրիին նկարագրեր:

Ճերմակ գյուղը (այսօր՝ Յեյ Դեղիրմենի), որտեղ ապրում էր գրողի ընտանիքը, 1500 հայերով է բնակեցված եղել, 200 տուն հայ եւ 7 տուն թուրք է ունեցել: Խառը դպրոց է ունեցել, արհեստագործական եւ մշակութային գյուղ է եղել: Միայն 70 հոգի է ողջ մնացել, որոնց Քարերի քրդերն են փրկել: Բազմաթիվ արհավիրքներից հետո գյուղ վերադարձաներից վերջինը 1953 թ. հեռացավ այնտեղից: Այսօր Ճերմակում միայն 85 հոգի է ապրում:

Իսկ Փերի գետի Մելենկի կամուրջը, որը գրողի պապը՝ Մարտիրոս Մարգարյանն է կառուցել, դեռեւս կանգուն է: Անհամբերությամբ սպասում ենք Օսեփ Թոքթաթի մյուս ստեղծագործություններին, հատկապես նրա պատմվածքներին:

Միյունք

ԲԱՅ ՆԱՄԱԿ



Թեիրանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մեպուհ Արք. Սարգսեանին

Սրբազան Հայր, Թեիրանի Հայ հասարակական միությանը՝ Հայ ակումբի, շենքի փլուզման առնչությամբ «ԻՄԱՆ»-յին տաճ Ձերդ Սրբազանության հարցազրույցը կարող է հպարտության առիթ տալ իւրաքանչիւր իրանահայի, նամանաւանդ երբ այնտեղ կարդում ենք՝ «Անհրաժեշտութեան դէպքում նոյնիսկ պատրաստ ենք դիմելու Իսլ. յեղափոխութեան առաջնորդի օգնութեանը»: Իսկապես ուրախալի է, երբ թեմի Առաջնորդը այդ թափով հանդէս է գալիս պաշտպանելու համայնքի հաստատություններից մեկին, այդ իսկ պատճառով ցանկանում եմ իմ արտագին շնորհակալություններն յայտնել Ձեզ, նոյն ժամանակ ցաւ յայտնելով, որ դժբախտաբար համայնքին վերաբերող ոչ բոլոր հարցերն են նման բախտի արժանանում, ինչպէս օրինակ՝ Հայ մարզամշակութային «Բաֆֆի» համալիրի դատական խնդիրը:

Այդուհանդերձ, ես՝ Ժողէֆ Ամիրեանս, թե՛ որպէս համայնքի յոյգերով մտահոգվող անձ եւ թե՛ որպէս իրաւաբան ու փաստաբան իմ պատրաստակամութիւնն են յայտնում Հայ Ակումբի հարցով իմ մասնագիտական ներդրումն ունենայ եւ չեմ կասկածում, որ այդ խնդրում մենք հենց սկզբից յաղթող ենք:
Որդիական սիրով
եւ Յարգանքով՝
Ժողէֆ Ամիրեան
Առաջին կարգի փաստաբան

Մինգապուրում հայ հոգեւորականի տունը թանգարանի կվերածեն



1835 թվականին Մինգապուրում կառուցված հայ հոգեւորականի տունը հաջորդ տարի թանգարանի եւ գրադարանի կվերածեն: Այս մասին գրում է straitstimes.com-ը: Ֆոտոյրագրող Դեանոնդ Լիմին թույլատրել են նկարահանումներ կատարել տան ներսում, որին ներկայում հետեւում են կամավորները: Աշխատասենյակի պատերին Հայաստանի քարտեզներ են, համայնքից յուսանկարներ, հանդիպումների սրահում հայ Կաթողիկոսների դիմանկարներ:
Լուսանկարներից մեկում սպասքն է, որը Լորետա Սարգսին թողել է հայրը՝ Հարություն Սարգիսը՝ Հարավ-արեւելյան Ասիայում հյուրանոցների ցանցի սեփականատեր հայտնի Սարգիս ընտանիքի ներկայացուցիչը:
Նշենք, որ հայերը Մինգապուրում հաստատվել են 18-րդ դարի վերջից: Ներկայում այստեղ գործում է հայկական Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:
Ավելի վաղ NEWS.am-ի թղթակցի հետ գրույցում Մինգապուրում Չինական միջազգային ավագ դպրոցի տնօրեն Վահագն Վարդանյանը նշել էր, որ հայ համայնքի ակտիվ խմբում շուրջ 40 մարդ կա:
«Մենք հավաքվում ենք տարին մի քանի անգամ, երբեմն՝ նաեւ ավելի հաճախ: Համայնքի կազմը պարբերաբար փոխվում է, քանի որ հայերի մի մասը ժամանակավոր է բնակվում Մինգապուրում: Սակայն եկեղեցին շարունակում է մնալ հայկական ինքնության կենտրոնը», - նշել էր նա:

Քալիֆորնիայում դանակահարված հայ տղամարդը մահացել է հիվանդանոցում

ԱՄՆ Քալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքում երկուշաբթի օրը դանակահարված հայ տղամարդը մահացել է հիվանդանոցում երկու օր անց:
Burbank Leader-ի փոխանցմամբ, երկուշաբթի գիշերը Սանլենդի 30-ամյա բնակիչ Մինաս Հարությունյանը հարձակման էր ենթարկվել Գլենդելի 57-ամյա բնակիչ Ալեքս Լիթջոնի կողմից: Հարությունյանը դանակի մի քանի

հարված էր ստացել, բայց կարողացել էր դիմադրել եւ սպանել Լիթջոնին:



ԱՄՆ Քալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքում երկուշաբթի օրը դանակահարված հայ տղամարդը մահացել է հիվանդանոցում երկու օր անց:
Burbank Leader-ի փոխանցմամբ, երկուշաբթի գիշերը Սանլենդի 30-ամյա բնակիչ Մինաս Հարությունյանը հարձակման էր ենթարկվել Գլենդելի 57-ամյա բնակիչ Ալեքս Լիթջոնի կողմից: Հարությունյանը դանակի մի քանի հարված էր ստացել, բայց կարողացել էր դիմադրել եւ սպանել Լիթջոնին:
Գլենդելի ոստիկանության ներկայացուցիչ Թահնի Լայթֆուրթի խոսքով, դեպքից հետո Հարությունյանը հասել էր ոստիկանություն եւ անհազանգել Իրավապահներն ու բժիշկները նրան արյունոտ վիճակում գտել էին բաժանմունքի մոտ: Դատարանի մոտ էլ գտել էին Լիթջոնի դին: Դեպքի վայրում հայտանքերվել էր նաեւ դանակը: Մինաս Հարությունյանին տեղափոխել էին հիվանդանոց, որտեղ բժիշկներին չէր հաջողվել փրկել նրա կյանքը, երկու օր անց նա մահացել է:
Հարձակման պատճառները դեռ հայտնի չեն, ընթանում է հետաքննություն:

Միջազգային

Իրանը կրկին հայտարարում է գազի ու նավթի դիմաց Հայաստանից եւ Վրաստանից ջուր ներկրելու մասին



Իրանը պատրաստվում է նավթի ու գազի դիմաց ջուր ներկրել Հայաստանից ու Վրաստանից՝ Ուրմիա լիճը վերականգնելու համար: Այս մասին հայտարարել է Իրանի խորհրդարանի պատգամավոր Ալի Ալիուն:
Նրա խոսքով, Մեւանա լիճը Հայաստանում եւ Կուր գետը Վրաստանում այն ռեսուրսներն են, որոնք կարող են ջուր տրամադրել Ուրմիա լճի համար, հաղորդում է [«Tehran Times»](http://TehranTimes)-ը՝ վկայակոչելով Mehr գործակալությունը:

Գիտնականներն արդեն հետազոտություն են իրականացրել, պարզելու համար Հայաստանից ու Վրաստանի ջրի մատակարարման հնարավորությունը, հավելել է պատգամավորը:

Իր հերթին, Ուրմիա լճի վերականգնման հարցերով հանձնաժողովի ներկայացուցիչ Խալիլ Սային նշել է, որ պլանը դեռ պետք է վերջնականապես հաստատվի, քանի որ ոմանք դեռ են հանդես գալիս այդ նախագծին:

Հարցն արդեն քննարկվել է Իրանի եւ Վրաստանի խորհրդարանների նախագահների միջեւ այս ամսվա սկզբին: Քննարկվում է նաեւ ջրի ներկրումը Վանա լճից:

Նշենք, որ Ուրմիա լիճը հայտնվել է ոչնչացման եզրին:

Վերջին 13 տարիներին լքում ջրի մակարդակն իջել է 6 մետրով եւ այն կորցրել է ջրի 85 տոկոսը:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](http://www.news.am)

Հասարակական

Ինչպե՞ս ծնվեց անկախությունը. 1988-ի շարժման երկու խոշոր սխալներն՝ ըստ Ալեքսան Հակոբյանի

Անկախության ճանապարհին մենք գրեթե սխալներ չենք արել. Մոսկվան Հայաստանին պատժեց «Կոլցո» գործողությամբ՝ Հայաստանի անկախության ձգտման համար, բայց մենք նահանջել չէինք կարող: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում նշեց «Ղարաբաղ» կոմիտեի անդամ, ներկայումս ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի «Քրիստոնյա Արևելք» բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Ալեքսան Հակոբյանը:

Պարոն Հակոբյան, ուղիղ 24 տարի առաջ Հայաստանն անկախություն ձեռք բերեց, ու այդ գործընթացի ակունքներում կանգնածներից մեկն էլ Դուք էիք, որպես «Ղարաբաղ» կոմիտեի անդամ: Այսօր ՀՀ-ում մեծացել է մի սերունդ, որը այդ օրերի ժամանակակիցը չի եղել, կպատմե՞ք ինչից ամեն ինչ սկսվեց:

Ամեն ինչ սկսվեց Ղարաբաղյան շարժումից, որից առաջ էլ 1980-ականներին մեծ վերելքի ժամանակաշրջան էր՝ անկախ Գորբաչովի սկսած «պերեստրոյկա» կոչվածից: Պարզապես «պերեստրոյկայի» շնորհիվ այդ վերելքը վերանցեց արցախյան շարժման: Ղարաբաղյան շարժումից էլ դուրս եկավ երկու շատ լավ բան՝ մեր անկախությունն ու Ղարաբաղի ազատագրությունը: Արցախի շարժումը շատ արագ միայն Արցախի ազատագրությանն ուղղված շարժումից վերածվեց բոլոր լավ բաներին ուղղված շարժման: Այսինքն Հայաստանի անկախություն, Հայաստանի հասարակության դեմոկրատացում, եւ արդեն 1988 թվականի հունիսին մեր շարժումն արդեն անկախական էր: Եթե 88-ի փետրվարին կարող էինք ասել, որ շարժումն անկախական չէր, ուղղված էր պարզապես Ղարաբաղին, ապա 1988-ի հունիսից շարժումը վերածվեց նաեւ անկախական շարժման: Նույն տարվա ամռանը դա արդեն հոչակվեց որպես համազգային շարժման կարելուրագույն խնդիրներից մեկը:

Իսկ կոնկրետ անկախության հանրաքվեի հարցը ծագեց 1991 թվականի հունվարին, երբ Մոսկվայում վերջապես լույս տեսավ ԽՍՀՄ կազմից դուրս գալու կարգի մասին երկար քննարկված օրենքը: Երբ այդ օրենքը լույս

տեսավ, մեզ մոտ վախն ու ուրախությունը խառնվեցին իրար: Վախը, որովհետեւ շատ ծանր ձեւեր էին դրված Մոսկվայից անկախանալու համար, մեկ էլ հանկարծ տեսանք, որ այդ ձեւերը հաղթահարելի են: Փաստորեն մեկ ամսվա ընթացքում նախապատրաստական աշխատանքն արվեց եւ փետրվարի վերջին Գերագույն խորհրդում արդեն քննարկել ենք այդ հարցը եւ այդ օրենքի շրջանակներում ու դրվածքով նշանակեցինք հանրաքվե:

Օրենքով պահանջվում էր հայտարարման օրից առնվազն 6 ամիս հետո նշանակել հանրաքվե, եւ մենք դրան գնացինք: Այդ ժամանակ տեղի ունեցավ ամենամեծ բաժանումը մեր շարժման մեջ: ՀՀ-ից առանձնացավ ԱՄՄ-ն, որը նաեւ այդ խնդրի հետ էր կապված: ԱՄՄ-ն ձեւավորած մեր ընկերներն ասում էին, որ պետք չի ուշադրություն դարձնել այդ 6 ամսվան, որ դա մեծ ժամանակահատված է, որ վտանգավոր է, որ այդ ընթացքում Կենտրոնը մեզ վատ բաներ կարող է անել, բայց մենք համարում էինք, որ այդ ժամկետը պետք է պահպանել, որպեսզի օրենքի տառը խախտած չլինենք: Այսօր տարիների հեռվից թվում է, թե մեծ բան չէր, բայց իրականում այն ժամանակ մենք գործ ունեինք մեր երկրի ու ժողովրդի հետ, որին չէր կարելի վտանգել: Արցախի պատերազմի հաջողության ամենակարևոր գրավականն այն էր, որ այդ շարժման ղեկավար մարմինը՝ «Ղարաբաղ» կոմիտեն, հետևում էր անվտանգության սկզբունքին, ծանր քայլեր էին արվում, բայց դրանք միշտ արվում էին մինչև ինչ-որ սահման: Ժողովուրդն էլ գիտեր ու վստահ էր, որ կենտրոնի դեմ, Մոսկվայի դեմ ինչ-որ արվում էր, հայտարարվում էր եւ սկզբունք էր՝ ամեն ինչ ամել չվտանգելով երկիրը, ժողովրդին եւ մարդկանց: Պատահական չէ, որ համարյա թե գոհ չենք ունեցել այդ ողջ ընթացքում, մի քանի բացառություններով, իհարկե: Խոսքը «Չվարթնոցի» դեպքի եւ մայիսի 27-ի դեպքի մասին է: Մենք այդ սկզբունքը պահպանեցինք, ամեն ինչ գնաց օրենքով, ինչ-որ տեղ դա էլ հաջողության գրավական եղավ եւ հասանք Մեպտեմբերի 21-ին:

Էլի փոքր կորուստներ եղան. Մոսկվան «Կոլցո» գործողությունն իրականացրեց անշուշտ Հայաստանի անկախության ձգտման համար: Թեև մեզ այդպես չէին ասում, բայց մենք հասկանում էինք, որ խնդիր էր դրված մեզ վախեցնել, թեաթափ անել, հետ կանգնեցնել: Մենք, իհարկե, չէինք կարող հետ կանգնել՝ անկախ գոհից: Մենք ոչ միայն Գետաշեն կորցրեցինք, նաեւ սահմաններին խնդիրներ կային Կապանում, Նոյեմբերյանում, եղան մարդկային կորուստներ: Բայց մենք հասկանում էինք, որ եթե մենք հետ կանգնեք ավելին ենք կորցնում: Կորցնում ենք Արցախի համար պայքարը շարունակելու մեր ունակությունը: Հասել էր այն պահը, որ մենք Արցախի համար պետք է պատերազմեինք: Մի բան է, երբ դու հանդես ես գալիս իրավական առումով Մոսկվային ենթակա երկիր, հանրապետություն, մեկ այլ բան է, երբ դու անկախ պետություն ես: Մենք հասկանում էինք, որ անկախությունը, բացի մնացած բոլոր բարիքներից, մեզ տալիս է Արցախը ձեռք բերելու եւ պահպանելու հնարավորություն: Տարիների հեռվից ես համարում եմ, որ մեր հաշվարկը ճիշտ էր արված: Ի վերջո հասանք Մեպտեմբերի 21-ի հանրաքվեին, որը տեղի ունեցավ համազգային ոգևորության պայմաններում եւ այսօր պետք է պաշտամունքի ձեւով նշվի:

Այսբան տարիների հեռվից անկախության ճանապարհին, պետություն կառուցելու ճանապարհին ի՞նչը այլ կերպ կանեինք, ինչի՞ համար եք փոշմանել:

